

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱԱԻՆ» ԵՐԿՐ ՀԱՅ
ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

Վաղ քրիստոսաբանական վեճերն առհասարակ մեծ ազդեցություն են գործել քրիստոնեական եկեղեցիների վրա, սակայն Քաղկեդոնի ժողովրդեղել և մնում է արևելյան քրիստոնեության պատմության մեջ ամենավիճահարույցը: Տիեզերական ժողովների պատմության մեջ ամենից շատ դրվել է Քաղկեդոնի ժողովի մասին և սա հասկանալի է, որովհետև վերջինիս ընդունած որոշումների հետևանքով քրիստոնեական ընդհանրական եկեղեցին տարանջատվեց երկու խոշոր հատվածների՝ միաբնակ և երկաբնակ: Այնուամենայնիվ, «քաղկեդոնական» պրոբլեմը դեռ բաց է ուսումնասիրության և ճշգրիտ ձևով հասկանալու համար այն ամբողջ պայքարը, որ ընթանում էր Քաղկեդոնի շուրջ, և այդ կտրվածքով նաև հայ եկեղեցու գիրքորոշումը վերջինիս նկատմամբ. մի խոսքով՝ հարկավոր է ուսումնասիրել այսպես կոչված «ժամանակաշրջանի Քաղկեդոնը», այն է՝ քաղկեդոնական պրոբլեմն իր ողջ պատմական և աստվածաբանական զարգացման մեջ հատկապես V–VI դդ.:

Նկատի առնելով այն հանգամանքը, թե եկեղեցին որքան ազդեցիկ և հեղինակավոր ինստիտուտ էր Բյուզանդական կայսրության մեջ, հասկանալի կլինի V դարի I կեսին կայսերական իշխանության շրջանակներում տիրող խորը մտահոգությունը, որի պատճառը եկեղեցական միասնության թուլացումն էր: Քրիստոնեական մտածողության ոլորտում տիրում էր խառնաշփոթություն՝ կապված քրիստոսաբանության կամ երկու բնությունների շուրջն արտահայտված երկու տարբեր՝ նեստորի և եվտիքեսի վարդապետությունների հետ: Այս երկու վարդապետություններն էլ հակադրվում էին եփեսոսի 3-րդ տիեզերական ժողովում (431թ.) ընդունված «մի բնության» վարդապետությանը: Ըստ էության, Քաղկեդոնի ժողովի նպատակն էր գտնել *via media*-ն, միջին ճանապարհը՝ կոնֆլիկտի լուծումը փոխզիջման սահմաններում¹:

Ժողովը գումարվեց 451թ. հոկտեմբերի ութից նոյեմբերի մեկը: Նրան մասնակցած եկեղեցականների՝ եպիսկոպոսների և նրանց ներկայացուցիչների թիվը, տարբեր փաստաթղթերում, տատանվում էր 500-ից 636-ի միջև: Է. Հոնիգմանի վերջին ուսումնասիրությունը՝ ժողովի մասնակիցների բնագիր ցանկերում որոշակի է դարձնում, որ 521-ը ամենահավանա-

1 *Sb' u Acta Conciliorum Oecumenicorum*, ed. by E. Schwartz, t. II, vol. I, pt. I, p. 27.

2 E. Honigmann. The Original lists of the members of the Council of Nicaea, the Robber – Synod and the council of Chalcedon.– Byzantion, t. XVI (1942/43), p. 45-47.

կան թիվն է, 521 եպիսկոպոսներ և եպիսկոպոսների ներկայացուցիչներ. թվերի մի սահման, որ գերազանցում է և՛ նախընթաց, և՛ հետագայում գումարվելիք ժողովների թվաքանակին:

Քաղկեդոնի ժողովը գումարվեց Արևելքում և րացառությամբ չորս պապական լեգատների, նրա բոլոր մասնակիցները ներկայացնում էին արևելյան թեմերը: Այս տեսանկյունից միայն ժողովը կարելի է անվանել տիպիկ արևելյան, սակայն նույն ընտրումը չի կարելի տարածել ժողովի ընդունած գավառաբանական որոշումների վրա, որովհետև նրանցում հաղթանակեց արևմտյան, լատինական քրիստոսաբանությունը:

V գարր, առհասարակ, ճակատագրական ժամանակաշրջան էր հայ ժողովրդի ու հայ եկեղեցու համար՝ կապված այն քաղաքական իրադրության հետ, որ գոյություն ուներ Հայաստանում 387թ. Հայաստանի առաջին ռաժանումից հետո, 428թ. հայկական պետականության կորստյամբ և ապա 451թ. Ավարայրի ճակատամարտով: Ստեղծված ծանր պայմաններում բոլորովին զարմանալի չէ, որ հայերը չմասնակցեցին եկեղեցու կյանքին իրենց երկրի սահմաններից դուրս: Թեև ժողովի տարբեր նիստերում՝ հիշատակվում են Միջագետք պրովինցիայից և բյուզանդական Առաջին և երկրորդ Հայքերից մասնակցած հայ եպիսկոպոսների անուններ, բայց, համենայն դեպս, հայ եկեղեցին իր պաշտոնական ներկայացուցիչը չունեց Քաղկեդոնի ժողովում (որևէ հրավերի վկայություն էլ չկա ո՛չ կայսրից, ո՛չ էլ կայսերական քաղաքի պատրիարքից):

Քաղկեդոնի ժողովն Անտիոքյան դպրոցի քրիստոսաբանության հաղթանակն էր, այն «հակառակ եղած էր Աղեքսանդրիո եկեղեցվուն, որուն վարդապետյանց հետ հայերն անխզելի կերպով կապված էին»⁴: Եվ թերևս պատճառներից մեկն էլ հենց դա է, որ 4-րդ Տիեզերական ժողովն առաջին շրջանում եթե ոչ ղժգոհություն, համենայն դեպս լուռ անհամաձայնություն առաջացրեց: Ընդհանրապես, «երբ հարցը գիտվում է հայ եկեղեցու աստվածաբանական ավանդույթի կոնտեքստում, Քաղկեդոնի մերժումն ինքնին շատ բնական է թվում»⁵:

Սակայն Քաղկեդոնի նկատմամբ բացի հայ եկեղեցու զուտ դավանաբանական դիրքորոշումից, բազմաթիվ գիտնականների կողմից նշվել են գրեթե տասնյակ պատճառներ, որոնց թվում հետաքրքրություն են առաջացնում այն դիտարկումները, թե Քաղկեդոնի ժողովի մերժման հիմքում

3 Քաղկեդոնի ժողովի արձանագրությունների և ընդունած կանոնների հունարեն և լատիներեն ընթերցումը ան՝ս J. D. M a n s i. Sacrorum Conciliorum Nova et Amplissima Collectio. T. VI-VII. G.- Austria, 1960. Եվ արդեն նշված Acta Conciliorum-ը:

4 Մ. ա Ր ք. Օ Ր մ ա ն յ ա ն. Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը..., Կ. Պ ո լ ի ս, 1912, էջ 45:

5 K a r e k i n՝ S a r k i s s i a n. The Council of Chalcedon and the Armenian Church. London, 1965, p. 21.

րնկած էին քաղաքական⁶, Հայաստանում աճող ազգայնականություն⁷, անգամ լեզվաբանական⁵ և այլ գրղապատմատններ:

Հայ եկեղեցու պատմությունը, մասնավորապես նրա V-XII դդ. միջև րնկած ժամանակաշրջանը խորապես ազդվել է Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ եկեղեցու դիրքորոշումից: Վերարեմունքը սույն ժողովի նկատմամբ ձևավորում է նաև Հայ աստվածաբանական գրականության բնույթն ու կողմնորոշումը, որն այս շրջանում հիմնականում առնչվում է Քրիստոսի անձին վերաբերող վարդապետությունը: Հայ աստվածաբանները մտահոգված էին քաղկեդոնական քրիստոսաբանության քննադատությունը՝ չեղարկելով Քրիստոսի բնությունների իրական միությունը:

Հարց է առաջանում, ինչու մի վաղ միջնադարյան մատենագրություն մեջ քաղկեդոնական բնույթի երկեր չեն պահպանվել: Այն, որ VI դարի վերջին և VII դարի սկզբին եղել են քաղկեդոնականությունը հարած եպիսկոպոսներ, հաստատվում է «Գիրք Թղթոց» ժողովածուի մեջ պահպանված մի շարք վաստերով⁸: Միանգամայն հավանական է, որ նրանք ստեղծել են քաղկեդոնական գիրքերից շարադրված ղրականություն: Գիտություն մեջ արտահայտվել են կարծիքներ, որ քաղկեդոնական այդ գրականությունը, որն ամենայն հավանականությամբ դոյություն է ունեցել ինչպես բուն Հայկական, այնպես էլ հունարենից թարգմանված, թերևս ոչնչացվել է միաբնակության վերջնական հաղթանակով¹⁰ (VI դարի վերջ-VII դարի սկիզբ):

Եվ այս տեսանկյունից մեծապես արժեքավորվում է գիտության մեջ «Narratio de rebus Armeniae» («Պատմություն Հայոց խնդիրների մասին») խորագիրը կրող, հունարեն բնագրով պահպանված, իրականում՝ Հայերենից թարգմանված, քաղկեդոնական գիրքերից շարադրված հաղվագյուտ մի սկզբնաղբյուր: Թեպետ աղբյուրն առավելապես հայտնի է «Narratio» խորագրով, վերջինս բնագրային չէ, իսկական վերնագիրը հու-

6 Եթե գիտնականների մի մասը գտնում է, թե Քաղկեդոնի ժողովը Հայ եկեղեցու կողմից մերժվեց պարսկական քաղաքականության ճնշման ներքո, որպեսզի Հայաստանն ընդգրկված լի մեջ մնա Բյուզանդական կայսրության նկատմամբ (տե՛ս G. B. Kidd. The churches of Eastern Christendom. London, 1927, p. 431-432; S. L. Greenslade. Schism in the Early Church. London, 1953, p. 68-69), ապա մյուս մասը, րնդհակառակը, գտնում է, թե մերժումը կատարելապես համապատասխանում էր ժամանակի բյուզանդական կայսրերի եկեղեցական քաղաքականությանը (տե՛ս K. Fortescue. The Armenian Church. London, 1872, p. 27, etc.):

7 Տե՛ս S. L. Greenslade. նշվ. աշխ., էջ 68-69, A. Fortescue. The Lesser Eastern Churches. London, 1913, p. 412.

8 Որոշ գիտնականներ գտնում են, թե V-VI դդ. Հայոց լեզուն անկարող էր վերարտադրել Լեոնի Տոմարում ե քաղկեդոնական սահմանման մեջ օգտագործված բանաձևերի ճշգրիտ թարգմանությունը, ուստի մերժման պատճառն առավելապես լեզվաբանական է (K. Fortescue. նշվ. աշխ., էջ 21, ինչպես նաև, T. E. Dowling. The Armenian Church, London, 1910, p. 61-62):

9 Տե՛ս Գիրք Թղթոց, էջ 78-80, 118, 122, 151-152, 161-162 և այլն:

10 Տե՛ս L. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին. Հ. I, Երևան, 1934, էջ 5,33: Ինչպես նաև՝ Ի. Ջավախիչվիլի. Հին վրացական պատմական ղրականությունը. Թիֆլիս, 1921, էջ 71-72 (վրացերեն): Ն. Ակիսյանի «Narratio de rebus Armeniae»-ի գրախոսականը «Հանդես ամսօրյա»-ում, 1953, սյն. 472:

նարենից թարգմանաբար «Պատմություն» է՝ ըստ նրա հունարեն վերնագրի առաջին բառի:

Narratio-ն հունարեն բնագրով և լատիներեն թարգմանություն մար առաջին անգամ հրատարակվել է XVII դարում, Յր. Կոմբեֆիսի կողմից¹¹: Ապա նույն տեքստը վերահրատարակվել է մի քանի անգամ¹², մշտապես հիմնված շատ թերի մի ձեռագրի վրա, որի թերություններին, դեռ իր ժամանակ, առաջին հրատարակիչ Յր. Կոմբեֆիսն ավելացրել էր ինքնակամ ընդմիջարկություններ: Արդյունքում, բազմաթիվ հատվածներում տեքստն անհասկանալի էր ու կասկածելի: Շնորհիվ վատիկանի երեք նոր ձեռագրերի հայտնաբերման (որոնցից երկուսը գրեթե կրկնություն են), որոնք ավելի հին, ավելի ճշգրիտ և ավելի ամբողջական են, հնարավորություն ընձույզեց կազմելու տեքստի քննական բնագիրը, որը փայլուն կերպով իրականացվեց բելգիացի հայագետ Ժ. Գարիտի կողմից¹³:

Narratio-ի քաղկեդոնիկ հեղինակը հայտնի չէ և այն պատմության մեջ մտել է որպես անանուն հեղինակի գործ, թեպետ տարբեր ժամանակներում, տարբեր գիտնականների կողմից աղբյուրը վերագրվել է Դեմետրիոս Կյուզիկեցուն¹⁴, Փիլիպպոս Միայնակեցուն¹⁵, VI դարում ապրած Գրիգոր Սարկավագապետին¹⁶ և ոմն հայ Սահակ քահանայի¹⁷, որն ապրել է XII դարում և հայտնի էր իր հակահայ գրություններով¹⁸: Ավելի մեծ հե-

11 F. C o m b e f i s. Patrum Bibliothecae novum auctarium, II, 1648. "Narratio de rebus Armeniae" col. 271-279. Աղբյուրն, այսպիսով, առաջին անգամ «Narratio» անվանվեց Յր. Կոմբեֆիսի կողմից: «Narratio»-ի տեքստից հետո, որպես վերջինիս շարունակություն, տպագրվեց հայ կաթողիկոսների ժամանակագրական մի ցանկ, որն իրականում որևէ առնչություն չունի աղբյուրի հետ, ինչպես ցույց է տվել Ժ. Գարիտը:

12 S t e u A. G a l l a n d i. Bibliotheca veterum Patrum, XIV, Venise 1781, Philippi Solitarii (Tractatus de rebus Armeniae խորագրով, P. 266-276. M i g n e. Patrologia Graeca, vol. 127, Paris, 1864, Philippi Solitarii) Tractatus de rebus Armeniae խորագրով, իսկ Patrologia Graeca, vol. 132, Paris, 1864, col. 1237-53 Isaacii Armeniae catholici (de rebus Armeniae խորագրով):

13 G. G a r i t t e. La Narratio de rebus Armeniae, edition critique et commentaire, Corpus Scriptorum christianorum Orientalium. Vol. 132, Louvain, 1952. Գրքի հրատարակությունից հետո նա ծանոթացավ «Narratio»-ի մի նոր ձեռագրի հետ, որի տարբերությունները գտնվում են առանձին հոդվածում. տե՛ս «Un nouveau manuscrit de la "Narratio de rebus Armeniae"». Le Museon, revue d'études orientales, t. LXXI, Louvain, 1958. Narratio-ի հայերեն և ֆրանսերեն թարգմանությունները տե՛ս Հ. Բարթիկյան. «Narratio de rebus Armeniae» հունարեն թարգմանություն մեզ հասած մի հայ քաղկեդոնական սկզբնաղբյուր. - «Բանբեր Մատենադարանի» N 6, էջ 457-70, և ֆրանսերեն թարգմանությունը՝ J. P. M a h e. La Narratio de rebus Armeniae, Traduction française. - Revue des études arméniennes. T. 25, Paris, 1994-95, p. 429-438.

14 S t e u o p. G. F i c k e r. Erlasse des Patriarchen von Konstantinopel Alexios Studites. Edinburgh, 1911, p. 22-23.

15 A. G a l l a n d i. նշվ. աշխ., ապա PG-ի vol. 127, Narratio-ն՝ վերագրված Փիլիպպոս Միայնակեցուն:

16 S t e u Ղ. Ա լ ի շ ա ն. Հայագատում. Վենետիկ, 1901, էջ 72:

17 S t e u P. P e t e r s. Traductions et traducteurs dans l'hagiographie orientale à l'époque Byzantine. - Analecta Bollandiana, N 60, 1922, p. 275-276, etc.

18 Patrum Bibliothecae novum auctarium, II, Premier Invective d'«Isaac» contre les Arméniens (col. 317-393), Deuxième Invective d'«Isaac» (col. 393-416). Այս ձեռագրի օրինակով նաև՝ PG 132, col. 1155-1218, col. 1217-1237.

դինակությունն հաղորդելու համար հունյն արտադրիչները նրան ներկայացնում էին որպես հայ կաթողիկոս:

Narratio-ի բոլոր հայտնի ձեռագրերում աղբյուրն անանուն է և բոլոր այս վերագրումները նվազագույն իսկ հիմնավորում չունեն:

Վերագրումը Դեմետրիոս Կյուզիկեցուն ծագել է միայն նրանից, որ առաջին հրատարակության մեջ (1648թ.) Narratio-ն պատահականորեն հետևում է մի տրակտատի, որն, ամենայն հավանականությամբ, պատկանում է Ալեքսիոս Ստուդիտեսի պատրիարքության ժամանակ (1025-1045թթ.) ապրած Դեմետրիոս Կյուզիկեցուն: Իրականում վերոհիշյալ տրակտատը ծագում է Narratio-ի ձեռագրի հետ առնչությունն չունեցող բոլորովին տարբեր մեկ այլ ձեռագրից:

Աղբյուրի վերագրումը Փիլիպպոս Միայնակեցուն Ա. Գալանդիի ենթադրությունն էր, առանց որևէ փաստարկման և երկը իր Գալանդիի ջանքերով «Tractatus de rebus Armeniae» խորագրով տպագրվեց որպես Միայնակեցու հեղինակություն:

Ամենից ավելի տարածում էր գտել Narratio-ի վերագրումը հայագրի Սահակ քահանային: Վերջինս ապրել է XII դարում, մինչդեռ ակնհայտ է, որ Narratio-ն VIII դարի սկզբի գործ է: Երկն ավարտվում է շուրջ 695թ. Հուստինիանոս II-ի ժամանակ բյուզանդական եկեղեցուն Սահակ Գ. Ձորափորեցի (677-703) կաթողիկոսի՝ հայ և բյուզանդական եկեղեցիների մասին միություն շարադրանքով և կարճ ժամանակ անց այդ ակտի մերժմամբ նույն Սահակ Գ-ի կողմից: Տեքստի ավարտն ունի ակնհայտ ամփոփիչ բնույթ և ներառում է հեղինակի հիասթափված մտորումները հայերի «անհետևողականության» ու «մոլորության» մասին: Հատկապես այս առումով աղբյուրը չի կարող թարգմանչի կողմից ընդհատված համարվել¹⁹: Բացի այդ, չի նշվում Ձորափորեցու գործունեության տևողությունը, մի հանդամանք, որ շատ հստակ է Narratio-ում բոլոր նախորդ անձանց դեպքում: Սա ևս հավաստում է, թե Narratio-ի հեղինակը ժամանակակից էր աղբյուրում հիշված վերջին դեպքերին, ուստի իր երկը շարադրել է VIII դարի սկզբներին: Փ. Գարիտի կարծիքով, «աղբյուրի հեղինակը մեկն էր հայ և բյուզանդական եկեղեցիների միության խմբավորման հետևորդներին»²⁰, մի խմբավորում, որն ամենայն հավանականությամբ ազդեցիկ էր նույնիսկ հայ եկեղեցու ներսում, հատկապես 631թ. Կարինի ժողովից հետո: Ամեն դեպքում, աղբյուրագիտական առկա նյութը թույլ չի տալիս ավելին ճշտել:

... Narratio-ն շարադրում է հայ եկեղեցու պատմությունը բյուզանդական եկեղեցու հետ իր հարաբերություններում՝ Նիկիայի առաջին տիեզերական ժողովից մինչև 700թ.: Բավական ծավալուն վերնագիրը կարծես

19 Մի շարք գիտնականներ գտնում են, որ թե՛ Narratio-ն, թե՛ «կաթողիկոսների ցանկը», որ երկար ժամանակ համարվում էր Narratio-ի անքակտելի մասը, միգուցե կազմվել են Սահակ Գ-ի ժամանակներում: Վերջինս հրավիրվել էր Կ. Պոլիս, որպեսզի քննարկվի եկեղեցիների միության հարցը. գուցե այս փաստաթղթերը կազմվել են այս գեպքի առիթով (տե՛ս L. Petit, art. «Isaac l'Arménien». Dict. Theol. Cath., VIII, 1924, col. 12 etc):

20 G. Garitte. նշվ. աշխ., էջ 400:

արտացոլում է գրության ողջ բովանդակությունը, հաղորդելով, թե ինչպես հայ եկեղեցին, սկզբնապես բյուզանդական եկեղեցու հետ ընդհանրություն մեջ, Դվինի 554թ. ժողովից հետո անջատվեց նրանից, մերժեց քաղկեդոնական վարդապետությունը, ապա ինչպես հայ եկեղեցին Բյուզանդիային միացնելուն հետամտած բյուզանդական կայսրեր Հուստինոս II-ի (565-578), Մավրիկիոսի (582-602), Հերակլեսի (610-641) և Հուստինիանոս II-ի (685-695) ջանքերն ապարդյուն անցան՝ հերթական «միությունները» հայոց կողմից մերժվելու պատճառով:

Վերնագրի ցուցումներին համապատասխան, Narratio-ն բաժանվում է երեք մասի. ա) հայ և բյուզանդական եկեղեցիների միության շրջան, բ) հայ եկեղեցու կողմից Քաղկեդոնի մերժման սկզբնավորման շրջան և գ) եկեղեցիների միության հետագա անհաջող փորձերի շրջան, փորձեր, որոնք ոչ մի հաստատուն արդյունքի չհանգեցրին:

Վերջին երկու մասերի մեջ շոշափվում է միայն հայ եկեղեցու պատմության հարցը, մինչդեռ առաջին մասում, ընդհակառակը, հեղինակը, սոսկ ուրվագծելով Հայաստանի քաղաքական և կրոնական պատմությունը, առավելապես անդրադառնում է IV-VI դդ. Բյուզանդական կայսրությունը փոթորկող դավանական անցքերին: Այստեղ ակնհայտ են բազմաթիվ հետքեր հակաքաղկեդոնական այն պայքարի, որ չորրորդ տիեզերական ժողովից հետո մղվում էր շուրջ մեկ դար Քաղկեդոնի հակառակորդների հաջողություններ:

Վերլուծելով աղբյուրի այս առաջին մասը, պարզ է դառնում, որ այն հանդես է դալիս որպես մի ներածություն, որը տրամադրում է հատկապես դավանական բնույթի անհրաժեշտ փաստեր՝ գրության շարունակությունը հասկանալու և դատապարտելու՝ հեղինակի կարծիքով, մոլորյալ հայ եկեղեցու վարդապետությունը: Առաջին հայացքից թվում է, թե այդ փաստերը վերաբերում են միայն բյուզանդական եկեղեցուն և հայ եկեղեցու հետ առնչություն չունեն: Սակայն փաստական այդ անհրաժեշտությունը երևան է գալիս, երբ այն դիտում ենք երկի ընդհանուր սահմաններում:

Այսպիսով, ի դեմս Narratio-ի, մեր առաջ հառնում է մի ամբողջական ծրագիր, մտահղացման մի միասնական կատարելություն, որում ոչինչ ավելորդ չէ:

Միջնադարյան երկու քաղկեդոնական սկզբնաղբյուրներ՝ Կ.Պոլսի Փոս պատրիարքի «Թուղթ առ Զաքարիա Հայոց կաթողիկոս» վերնադիրը կրող գործը՝ պահպանված հայերեն²¹, և վրաց կաթողիկոս Արսեն Սափարացու «Վրաց և Հայոց բաժանման մասին» աշխատությունը²² բազմաթիվ

21 Պահպանվել են Փոսի և Զաքարիա կաթողիկոսի թղթակցության նմուշներ. տե՛ս Գիրք Թղթոց, էջ 279-294, ինչպես և՝ Православный палестинский сборник, т. XI, СПб., 1892, с. 179-210. Թուղթ Փառտայ պատրիարքի առ Զաքարիայ կաթողիկոս Հայոց Մեծաց. սրա վերաբերյալ տե՛ս V. Grumel. L'envoye de Photius au catholico Zacharia.- Revue des etudes Byzantines. T. XIV, (1956): Ն. Ա կ ի ն յ ա ն. Թուղթ Փոթայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս.- «Հանդես ամսօրյա», 1968, սյն. 65-100:

22 Տե՛ս. Լ. Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ. նշվ. աշխ.: Արսեն Սափարացու - ց ի. Վրաց և Հայոց բաժանման մասին, էջ 34-47: Որ Արսեն Սափարացին IX դարի

Հատվածներում զուգահեռներ ունեն Narratio-ի հետ: Այս տեքստերի միջև ուղղակի որևէ կախվածություն դեպքում ուշադրություն դարձնելու միակ արժանի հիպոթեզը կլիներ այն, որ IX դարի այս գործերը ծագում են VIII դարի սկիզբ թվագրվող Narratio-ից, ինչպես գտնում էին մի շարք մասնագետներ²³: Սակայն այս տարբերակը բացառվում է տեքստերի բովանդակության քննությամբ: Համապատասխանությունները երեք տեքստերի միջև բացատրվում են, ուրեմն, միևնույն աղբյուրի օգտագործմամբ, մի կորսված հայերեն աղբյուրի, որ այժմ ունենք վերարտադրված այս երեք աղբյուրներով:

Հայերի հետ պատրիարք Փոտի թղթակցության ժամանակագրությունը ամենայն որոշակիությամբ հաստատված չէ: Փ. Դարողի կարծիքով²⁴, այն պետք է թվագրել 862թ., մի թվական, երբ տեղի ունեցավ Շիրակավանի հայոց ժողովը (Փ. Լորանը նույնպես գտնում էր, որ հայտնի բոլոր փաստաթղթերը Փոտի առաջին պատրիարքությանն են վերաբերում (858-862): «Փոտի նամակների հասցեատերերն էին իշխանաց-իշխան Աչոտը (առաջին թուղթ) և Զաքարիա կարթղիկոսը (երկրորդ թուղթ), — շարունակում է Փ. Դարողեն²⁵, — սակայն, իրականում, առաջին թուղթը մի պատասխան է՝ ուղարկված Զաքարիայի առաջին նամակին՝ նշված իր անվամբ, իսկ երկրորդ թուղթը Փոտի հակաճառությունն է Զաքարիայի պատասխանին. այսպիսով՝ Փոտի երկրորդ նամակը Զաքարիային»:

Պատմական ներածությունը, որը կազմում է «Փոտ առ Զաքարիա կաթողիկոս» թղթի առաջին մասը, բավական նման է Narratio-ի նույն փաստերի հետ առնչվող հատվածներին: Նմանություններն ավելի քան ակնառու են, թեպետ յուրաքանչյուրն իր հերթին, և՛ Narratio-ն, և՛ թուղթն ունեն կարևոր մանրամասներ, որոնք երբեմն հաստատվում են Սափարացու աշխատությամբ:

Արսեն Սափարացու երկն ունի հունարեն տեքստին մոտավորապես կիսով չափ զուգահեռ ամբողջական հատվածներ, շատ ավելի հարազատ, քան Փոտի թուղթը: Ընդհանուր առմամբ Narratio-ի 2-րդ և 3-րդ մասերի համարյա ամբողջությունն առկա է վրացերեն տրակտատում: Համապատասխանությունները երկու տեքստերի միջև հաճախ բառացի են, տարբերություններն՝ աննշան: Այնուամենայնիվ, նրանք չեն կարող կախված լինել մեկը մյուսից, որովհետև այստեղ ևս, նրանցից յուրաքանչյուրն ունի բազում տարրեր՝ անհայտ մյուսին: Ամբողջական հատվածներ ընթերցվում են կամ միայն վրացերեն տեքստում, կամ միայն Narratio-ում: Յուրաքանչյուրի մեջ առկա բազմաթիվ մանրամասները չեն կարող լինել հետագա խմբագիրների ինքնակամ հավելումներ:

II կեսի հեղինակ է տե՛ս Լ. Մ Ե Լ Ի ք ս Ե Թ - Բ Ե Կ. նշվ. աշխ., էջ. 30: Ի վ. Զ ա - վ ա Խ Ի շ վ Ի Լ Ի. նշվ. աշխ. էջ 60-63 և այլն:

²³ Տե՛ս Կնիք. Հավատո, Հրատարակություն Կարապետ Կախկոպոսի. էջմիածին, 1914, էջ LXXIII, XCIV, ինչպես նաև Լ. Մ Ե Լ Ի ք ս Ե Թ - Բ Ե Կ. նշվ. աշխ., էջ 34: Ն. Ա կ Ի ն յ ա ն. Տիմոթեոս էլուրոսը հայ գրականության մեջ. Վիեննա, էջ 18: Ն ու յ ն Ի՝ Կյուրիոն. կաթողիկոս վրաց. Պատմություն հայ-վրացական Հարաբերությանց յոթերորդ դարու մեջ. Վիեննա, 1910, էջ 289-90:

²⁴ Տե՛ս J. D a r r o u z e s. Deux lettres inédites de Photius aux Arméniens. — Revue des études Byzantines. T. XXIX, Paris, 1971, p. 138.

²⁵ Նույն տեղում:

Այսպիսով, այս երեք աղբյուրների հեղինակներն էլ օգտվել են միևնույն հայերեն աղբյուրից, որոնց մեջ «Narratio-ն է, որ ամենաճիշտ կերպով և հարազատությամբ ներկայացնում է կորած հայերեն աղբյուրը»²⁶:

Ո՛չ Սափարացու երկում և ո՛չ էլ Փոտի թղթում խոսք չկա շուրջ 695թ. Սահակ Գ. Ձորափորեցի կաթողիկոսի բյուզանդական եկեղեցուն հարած լինելու մասին: Այդ մասին ասված է Narratio-ի վերջին դրվագում: Ժ. Գարիտի համոզմամբ, անհնարին է, որ կորած հայերեն աղբյուրն ավարտված լիներ այնպես, ինչպես Սափարացու երկը և Փոտի թուղթը՝ Հովհաննես Մայրաբոմեցու մահվան հիշատակումով և նրա աշակերտների գործունեությունը պատմությունը²⁷: Նրա կարծիքով, Սահակ Գ. Ձորափորեցու կողմից եկեղեցիների միությունն այս փորձը ևս անպայմանորեն պետք է նշված լիներ հայերեն բնագրում: Սակայն ավելի հավանական է, որ այս փաստը բացակայում էր նրանում, որովհետև վրաց քաղկեդոնիկ կաթողիկոսը և բյուզանդական քաղկեդոնիկ պատրիարքն անպայման կնշեին հայերի «անհետևողականությունը» մասին այս հերթական օրինակը՝ բյուզանդական եկեղեցուն հարելու և ապա ետ կանգնելու սովորական դարձած այս փաստը: Սույն վկայությունը, ամենայն հավանականությամբ, որպես ժամանակակցի, պատկանում էր միայն Narratio-ի հեղինակին:

Իր հաղորդումների մեջ Narratio-ն միանգամայն անկախ է Հայ ազգային եկեղեցական պատմագրության ավանդույթից: Հակաքաղկեդոնական պատմիչների կողմից անտեսված կարևոր փաստեր և բազմաթիվ մանրամասներ հայտնի են դառնում Narratio-ի շնորհիվ: Օրինակ.

ա) ասորի հուլիանականների գերը Դվինի 554թ. ժողովում²⁸,

բ) քաղկեդոնականների գեմ Աբրահամ կաթողիկոսի ձեռնարկած հետապնդումները, որոնց մասին լռում են մեր պատմագիրները, մինչգեո այդ մասին շատ որոշակի նշված է «Գիրք թղթոց»-ում պահպանված մի քանի փաստաթղթերում²⁹,

գ) մանրամասներ Կոմիտաս կաթողիկոսի մասին, հատկապես նրա կանոնների վերաբերյալ վկայությունը՝ ս. Սահակին վերագրված³⁰,

դ) որոշ մանրամասներ Կարինի ժողովի և Հովհաննես Մայրաբոմեցու մասին և այլն:

26 G. Garitte. նշվ. աշխ., էջ 379:

27 Նույն տեղում, էջ 378:

28 Նախքան Դվինի 554թ. ժողովի գումարումը, երկարատև թղթակցություն է ընթանում Հայոց Ներսես Բագրևանդցի կաթողիկոսի և ասորի Աբդիշո եպիսկոպոսի միջև (տե՛ս Գիրք թղթոց, էջ 52-69): Այս գրությունների մեջ առկա է դավանական ընդգծված համերաշխություն: Դվինի ժողովում հուլիանականների ունեցած դերի մասին վկայվում է նաև «Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի առ Արաս Աղվանից կաթողիկոս» թղթի մեջ (տե՛ս. Կ. Տեք - Մկրտչյան. Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղվանից կաթողիկոս. Վաղարշապատ, 1896, էջ 2, 9): Այս մասին հիշատակվում է նաև Դվինի ժողովի մասին պատմական մի հիշատակարանում՝ «Գիր մերոյ Հարցն որ ի Դուին ժողովեալ» խորագրով (տե՛ս Պ. Ա. Ն. ա. ն. յ. ն. Պատմական հիշատակարան մը Դվինի Բ ժողովի մասին. - «Բաղմավեա», 1957, էջ 112): Հմմտ. նաև Փոտի թուղթը (էջ 181) և Սափարացու երկը (էջ 37):

29 Գիրք թղթոց, էջ 151-152, 161-162:

30 Հմմտ. Արսեն Սափարացի. նշվ. աշխ., էջ 38:

Անգամ երբ Հեղինակը շարադրում է Հայ միջնադարյան պատմիչներից Հայտնի առանձին պատմական դրվագներ, նա այդ պատմիչներից միանգամայն անկախ է:

Narratio-ում կան պատմական իրականության մասին փոքրաթիվ անճշտություններ, որոնք, սակայն, չեն խեղաթյուրում շարադրված փաստերի ո՛չ էությունը, ո՛չ էլ ընդհանուր նշանակությունը:

“ПОВЕСТВОВАНИЕ О ДЕЛАХ АРМЯНСКИХ” – ПЕРВОИСТОЧНИК
ДЛЯ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

КАРИНЕ МЕЛИКЯН

Р е з ю м е

Позиция Армянской церкви по отношению к Халкедонскому Собору в целом повлияла на развитие истории Армянской церкви, особенно в период между V–XII вв. Официальное отношение к этому Собору определило также сущность и ориентацию армянской теологической литературы. Однако, в средневековой армянской историографии не известны труды халкедонского характера, за исключением одного уникального первоисточника под названием “Narratio de rebus Armeniae” (“Повесть о делах армянских”), который дошел до нас в греческом переводе. Армянский оригинал считается пропавшим. Халкедонский автор “Narratio” неизвестен, и в исторической литературе оно считается произведением Анонима, хотя в разные времена авторство приписывалось разным лицам. “Narratio”, будучи произведением начала VIII в., излагает историю сношений между Армянской и Византийской церквами в период 325–700 гг. Много соответствий с “Narratio” имеют два средневековых первоисточника – “Письмо Патриарха Константинополя Фотия, написанное Католикосу армян Захария” и труд Католикоса Грузии Арсена “О расколе между армянами и грузинами”. Эти параллели можно объяснить тем, что вышеупомянутые три автора использовали тот же самый древнеармянский первоисточник, который ныне утерян. В своих изложениях исследуемый первоисточник независим от традиций армянской церковной историографии. Следует отметить, что благодаря “Narratio” становятся ясными некоторые детали истории Армянской церкви.

THE WORK “NARRATIO DE REBUS ARMENIAE” AS A SOURCE FOR THE
HISTORY OF THE ARMENIAN CHURCH

KARINE MELIKYAN

S u m m a r y

The development of history of the Armenian Church on the whole, and especially in the period between the 5th and 12th centuries, was influenced by the attitude of the Church towards

the Council of Chalcedon. The official attitude to this Council defined the essence and orientation of the Armenian theological literature. Nevertheless, there is no work of Chalcedonic nature in the medieval Armenian historiography. The only exception is a unique composition under the title «Narratio de rebus Armeniae» («Narration on the Armenian Questions») which has preserved to us in Greek translation. The Armenian original is lost. The Chalcedonic author of «Narratio» is unknown, and in historiography it is considered to be a composition of an Anonymous author, though in different periods this source was ascribed to various authors. «Narratio» being composed at the beginning of the 8th century expounds the history of relations between the Armenian and the Byzantine Churches in the years within 325-700. Two medieval sources «The letter of the Constantinople Patriarch Photius written to the Catholicos of the Armenians Zakaria» and the work of Catholicos of the Georgians Arsen «On the Schism between the Armenians and the Georgians» have numerous coincidences with «Narratio». These correspondences may be explained by the fact that the three above mentioned authors had used one and the same old Armenian source which is lost. «Narratio»'s contents is independent of traditions of the Armenian national church historiography. It is worth to note that some important details of history of the Armenian Church have been revealed due to the work under consideration.